գտնում է, որ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ «Էկովիլ» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 495.186,5 ՀՀ դրամ (*բավարարված՝ թվով 1 հայցապահանջին համամասնորեն*)՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ պետական տուրքի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Էկովիլ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ «ԷկոՎիլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

անվավեր ճանաչել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված՝ թիվ ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.10.2025 թվականին կազմված թիվ 2 արձանագրությամբ «ԷկոՎիլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Հայցը՝ մնացած՝ «Էկովիլ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասով, մերժել:

2. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ «Էկովիլ» ՍՊԸ-ի բռնագանձել 495.186,5 (չորս հարյուր իննսունհինգ հազար հարյուր ութսունվեց ամբողջ հինգ) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE33-7B07-4E8C-90A7 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am